

**«Հրազդանի Էներգետիկ
Կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ**

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

*2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն.....	1
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն.....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն.....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն.....	4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ.....	5
2.1 Համախմբված հաշվետվությունների պատրաստման հիմունքները.....	5
2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր.....	7
2.3 Նոր ստանդարտներ, գործող ստանդարտների պարզաբանումներ և ճշգրտումներ.....	15
2.4 Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ.....	17
3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ.....	17
4. Տեղեկատվություն Խմբի մասին.....	19
5. Հասույթ.....	20
6. Վաճառքի ինքնարժեք.....	20
7. Վարչական ծախսեր.....	20
8. Այլ եկամուտներ և ծախսեր.....	21
9. Ֆինանսական եկամուտներ.....	21
10. Շահութահարկ.....	21
11. Հիմնական միջոցներ.....	23
12. Մաշվածություն և ամորտիզացիա.....	24
13. Պաշարներ.....	24
14. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր.....	25
15. Տրված փոխառություններ.....	25
16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.....	25
17. Կանոնադրական կապիտալ և պահուստներ.....	26
18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր.....	26
19. Աշխատավարձի գծով հավելյալ վճարների պահուստ.....	26
20. Կապակցված կողմերի բացահայտումներ.....	27
21. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ.....	28
22. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները.....	29

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության և իր դուստր կազմակերպությունների (այսուհետ՝ «Խմբի») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի բաժինների վերաբերյալ ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք ուղղված են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռք բերմանը: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից՝ ներառյալ խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Ի դեմս գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյանի
(գործող 2013թ.-ի հուլիսի 31-ին տրված
լիազորագրի հիման վրա)

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝



Էրիկ Հայրապետյան

29 հունվարի, 2016 թ.

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված
հաշվետվություն****2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2015թ.	2014թ.
Հասույթ	5	21,395,469	31,970,434
Վաճառքի ինքնարժեք	6	(19,971,669)	(28,641,421)
Համախառն շահույթ		1,423,800	3,329,013
Վարչական ծախսեր	7	(894,611)	(896,502)
Իրացման ծախսեր		(4,034)	(4,515)
Այլ եկամուտներ	8	84,453	80,504
Այլ ծախսեր	8	(58,910)	(90,070)
Ֆինանսական եկամուտներ	9	248,771	270,701
Շահույթ նախքան շահութահարկը		799,469	2,689,131
Շահութահարկի գծով ծախս	10	(97,624)	(524,351)
Հաշվետու տարվա շահույթ		701,845	2,164,780
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական եկամուտ		701,845	2,164,780

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

29 հունվարի, 2016 թ.



Վասիլ Խաչատրյան

Աշոտ Ավետիսյան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**

(հազար ՀՀ դրամ)

	<i>Ծան.</i>	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	1,166,542	1,359,539
Ոչ նյութական ակտիվներ		3,231	4,255
Տրված փոխառություններ	15	1,308,216	1,168,233
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	163,390	146,048
		2,641,379	2,678,075
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	13	171,672	189,549
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	3,579,685	5,615,782
Տրված փոխառություններ	15	4,857,632	–
Շահութահարկի գծով կանխավճար		381,395	95,198
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	699,707	5,354,244
		9,690,091	11,254,773
Ընդամենը ակտիվներ		12,331,470	13,932,848
Մեփական կապիտալ և պարտավորություններ			
Մեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	17	7,813,350	7,813,350
Ակտիվների վերագնահատման պահուստ	17	79,744	103,008
Պարտադիր պահուստ	17	421,517	386,425
Կապիտալի բաշխման հետ կապված վճարումներ		(199,426)	(199,426)
Զբաղիված շահույթ		1,132,354	442,337
		9,247,539	8,545,694
Ընթացիկ պարտավորություններ			
Աշխատավարձի գծով հավելյալ վճարների պահուստ	19	216,937	271,172
Կրեդիտորական պարտք շահութահարկի գծով		–	429,285
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	2,866,994	4,686,697
		3,083,931	5,387,154
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		12,331,470	13,932,848

Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն**2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	<i>Կանոնադրա- կան կապիտալ</i>	<i>Վերագնա- հատման պահուստ</i>	<i>Կուտակված վնաս/ կուտակված շահույթ</i>	<i>Կապիտալի բաշխման հետ կապված վճարումներ</i>	<i>Պարտադիր պահուստ</i>	<i>Ընդամենը սեփական կապիտալ</i>
2014 թ. հունվարի 1-ի դրությամբ	15,974,300	142,004	(9,814,150)	–	278,186	6,580,340
Տարվա համապարփակ եկամուտ	–	–	2,164,780	–	–	2,164,780
Կուտակված վնասի փոխհատուցում կանոնադրական կապիտալի միջոցով	(8,160,950)	–	8,160,950	–	–	–
Տրված փոխառության գումարի և իրական արժեքի տարբերության սկզբնական ճանաչում՝ առանց հետաձգված հարկի (49,856 հազար դրամ)	–	–	–	(199,426)	–	(199,426)
Հիմնական միջոցների վերագնահատման իրացված պահուստ	–	(38,996)	38,996	–	–	–
Պարտադիր պահուստի համալրում	–	–	(108,239)	–	108,239	–
2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,813,350	103,008	442,337	(199,426)	386,425	8,545,694
Տարվա համապարփակ եկամուտ	–	–	701,845	–	–	701,845
Հիմնական միջոցների վերագնահատման իրացված պահուստ	–	(23,264)	23,264	–	–	–
Պարտադիր պահուստի համալրում	–	–	(35,092)	–	35,092	–
2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,813,350	79,744	1,132,354	(199,426)	421,517	9,247,539

Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական
հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն**2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	<i>Ծան.</i>	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Գործառնական գործունեություն			
Շահույթ մինչև հարկումը		799,469	2,689,131
<i>Ոչ դրամական հոդվածների ճշգրտումներ մինչև հարկումը շահույթը զուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով՝</i>			
Ամորտիզացիա և մաշվածություն	12	300,453	378,344
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ	9	(24,016)	(170,028)
Տոկոսային եկամուտ	9	(224,755)	(100,673)
Աշխատավարձի հավելյալ վճարների գծով պահուստի վերականգնում	19	(54,235)	(54,235)
<i>Շրջանառու կապիտալի ճշգրտումներ՝</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի նվազում		2,036,097	2,842,836
Պաշարների նվազում		17,877	9,348
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի նվազում		(1,829,988)	(2,556,526)
		1,020,902	3,038,197
Վճարված շահութահարկ		(813,106)	(89,105)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		207,796	2,949,092
Ներդրումային գործունեություն			
Փոխառությունների տրամադրում		(4,828,100)	(1,229,070)
Ստացված տոկոսային եկամուտներ		70,320	51,323
Ավանդների մարում		–	2,476,356
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(105,772)	(64,675)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված) /ստացված ներդրումային գործունեությունում		(4,863,552)	1,233,934
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,219	11,865
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		(4,654,537)	4,194,891
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ		5,354,244	1,159,353
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դեկտեմբերի 31 ի դրությամբ	16	699,707	5,354,244

Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:

1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» (այսուհետ «ՀրազԶԷԿ» կամ «Մայր ընկերություն») բաց բաժնետիրական ընկերությունը հիմնադրվել է Ռուսաստանի Դաշնության Դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության 2004թ. սեպտեմբերի 1-ի թիվ 291-՝ որոշման համաձայն:

«ՀրազԶԷԿ»-ը ստեղծվել է Հրազդանի ջերմաէլեկտրակայանի գույքային համալիրը որպես Ընկերության կանոնադրական կապիտալ ներդնելու միջոցով, որը Հայաստանի Հանրապետության կողմից Ռուսաստանի Դաշնությանն էր փոխանցվել՝ որպես պետական պարտքի մարման միջոց:

2011թ. Ընկերության բաժնետեր էին հանդիսանում «Ռոսնէֆտեգազ» ԲԲԸ-ն (100%՝ հանած 1 բաժնետոմս), Ռուսաստանի Դաշնությունը՝ ի դեմս դաշնային գույքի կառավարման Դաշնային գործակալության (1 բաժնետոմս): 2012թ. մայիսի 17-ին Ընկերության 100% բաժնեմասը փոխանցվել է «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵՆՍ» ԲԲԸ-ին («Ինտեր ՌԱՕ» ԲԲԸ): 2015թ. ապրիլին «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵՆՍ» ԲԲԸ-ի և «Լիորմանդ Հոլդինգս» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի 2015թ. նոյեմբերին «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» ԲԲԸ-ի 25% բաժնեմասը փոխանցվել է «Լիորմանդ Հոլդինգս» ՍՊԸ-ին:

Մայր ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Հրազդան, Գործարանային փ. 1:

2015թ. նոյեմբերին «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» ԲԲԸ-ն ստեղծել է դուստր ընկերություն «Էներգո Ինվեսթ Հոլդինգ» ՓԲԸ, որի կանոնադրական կապիտալը կազմել է 5 մլրդ. ՀՀ դրամ (Ծանոթագրություն 4):

Խմբի հիմնական գործունեությունը էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրությունն է և թողարկված էլեկտրաէներգիայի վաճառքը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին: Սահմանված հզորությունը կազմում է 1,110 ՄՎտ, իսկ աշխատանքայինը՝ 780 ՄՎտ: Հայաստանի ներքին շուկայում «ՀրազԶԷԿ»-ը ունի հավասարակշռող (եզրափակիչ) կայանի կարգավիճակ: Ներքին սպառման համար Խումբն էլեկտրաէներգիա է արտադրում միայն Հայաստանի Հանրապետության էներգահամակարգում դեֆիցիտի առկայության պարագայում (հիմնականում աշնան ու ձմեռային ամիսներին և ատոմակայանի պարապուրդի ժամանակաշրջանում):

Մայր ընկերության կողմից արտադրված էլեկտրաէներգիայի սակագները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

2.1 Համախմբված հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Համապատասխանության մասին հայտարարություն

Խմբի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՄ) համապատասխան, որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից: Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք գնահատվել են իրական արժեքով: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար, եթե այլ բան նշված չէ:

Հաշվետվությունների համախմբման հիմունքները

Դուստր ընկերությունները, որոնց գործունեության նկատմամբ Խումբը վերահսկողություն է իրականացնում, համախմբվում են: Վերահսկողությունն իրականացվում է այն դեպքում, երբ Խումբն իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով: Մասնավորապես, Խումբը վերահսկում է ներդրումը, միայն և միայն այն դեպքում, երբ բավարարվում են հետևյալ պայմանները՝

- ▶ Խումբն ունի իրավասություն ներդրվող օբյեկտի նկատմամբ (այսինքն՝ գոյություն ունեցող իրավունքներ, որոնք ապահովում են ներդրման օբյեկտի նշանակալի գործունեությունը կառավարելու հնարավորություն),
- ▶ Խումբն ունի իրավունք ներդրումներից ստացվող փոփոխական արդյունքների նկատմամբ և ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին,
- ▶ Խումբն ունի հնարավորություն օգտագործելու իր իրավասությունները ներդրման օբյեկտի նկատմամբ՝ ներդրումներից փոփոխական արդյունքների վրա ազդելու նպատակով:

2.1 Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

Հաշվետվությունների համախմբման հիմունքները (շարունակություն)

Որպես կանոն, ենթադրվում է, որ ձայնի իրավունքի մեծամասնությամբ է պայմանավորված վերահսկողությունը: Սույն ենթադրության հաստատման, ինչպես նաև Խմբի մոտ մեծամասնությունից ավելի քիչ քվեարկման կամ ներդրման օբյեկտի նկատմամբ մեծամասնությունից ավելի քիչ նմանատիպ իրավունքների առկայության դեպքում, Խումբը հաշվի է առնում է բոլոր փաստերը և հանգամանքները տվյալ ներդրման օբյեկտի նկատմամբ իրավասության առկայությունը գնահատելիս, ներառյալ

- ▶ ներդրման օբյեկտի նկատմամբ ձայնի իրավունք ունեցող անձանց հետ պայմանագրային համաձայնությունը,
- ▶ այլ համաձայնագրերից ծագող իրավունքները,
- ▶ Խմբին պատկանող առկա և հնարավոր քվեարկման իրավունքները:

Խումբը կրկնակի վերլուծում է ներդրման օբյեկտի նկատմամբ վերահսկողության առկայությունը, եթե փաստերը և հանգամանքները ցույց են տալիս, որ վերահսկման երեք տարրերից մեկի կամ մի քանիսի մոտ կան փոփոխություններ: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ՝ սկսած Խմբի կողմից դուստր ընկերության նկատմամբ վերահսկողության ձեռքբերման պահից մինչև այդ վերահսկողության դադարելը:

Շահույթը կամ վնասը և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների ցանկացած բաղադրիչ վերագրվում է Խմբի մայր ընկերության սեփականատերերին և չվերահսկվող բաժնեմասին, նույնիսկ եթե այն հանգեցնում է չվերահսկվող բաժնեմասերի մոտ բացասական մնացորդի: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխանեցնելու նպատակով: Ներխմբային բոլոր ակտիվները և պարտավորությունները, կապիտալը, եկամուտները, ծախսերը և դրամական հոսքերը, որոնք առաջացել են Խմբի ներսում գործառնությունների արդյունքում, համախմբելիս ամբողջությամբ բացառվում են:

Առանց վերահսկման կորստի դուստր ընկերությունում մասնակցության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալում փոփոխություն: Եթե Խումբը կորցնում է դուստր ընկերության նկատմամբ վերահսկողությունը, այն՝

- ▶ ապաճանաչում է դուստր ընկերության ակտիվները (ներառյալ՝ գույքվիլը) և պարտավորությունները,
- ▶ ապաճանաչում է չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեքը,
- ▶ ապաճանաչում է սեփական կապիտալում ճանաչված կուտակված փոխարժեքային տարբերությունները,
- ▶ ճանաչում է ստացված հատուցման իրական արժեքը,
- ▶ ճանաչում է մնացած ներդրման իրական արժեքը,
- ▶ ճանաչում է գործարքի արդյունքում առաջացած ավել կամ պակաս գումարը շահույթում կամ վնասում,
- ▶ վերադասակարգում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված մայր ընկերության տարրերի բաժինը շահույթում կամ վնասում կամ չբաշխված շահույթում, համապատասխանաբար, ինչպես կպահանջվեր, եթե Խումբն ուղղակիորեն օտարեր համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը ընթացիկ/կարճաժամկետի և ոչ ընթացիկ/երկարաժամկետի

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում Խումբը ներկայացնում է ակտիվները և պարտավորությունները, որպես ընթացիկ/կարճաժամկետ և ոչ ընթացիկ/երկարաժամկետ դասակարգման հիման վրա: Ակտիվը համարվում է ընթացիկ, եթե.

- ▶ Նախատեսվում է այն իրացնել, վաճառել կամ սպառել սովորական գործառնական ցիկլի շրջանակներում;
- ▶ Այն նախատեսված է հիմնականում առևտրային նպատակների համար;
- ▶ Այն նախատեսվում է իրացնել հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում; Այն իրենից ներկայացնում է դրամական միջոցներ կամ դրանց համարժեքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սահմանափակում այն փոխանակել կամ օգտագործել պարտավորությունների մարման համար հաշվետու ժամանակաշրջանից հետո առնվազն 12 ամիսների ընթացքում:

Մնացած բոլոր ակտիվները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ:

Պարտավորությունը համարվում է ընթացիկ, եթե.

- ▶ Այն նախատեսվում է մարել սովորական գործառնական ցիկլի շրջանակներում;
- ▶ Այն հիմնականում պահվում է առևտրային նպատակներով;
- ▶ Այն մարվելու է հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում;
- ▶ Կազմակերպությունը չունի անվերապահ իրավունք՝ երկարաձգելու մարման ժամկետը հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող նվազագույնը 12 ամիսների ընթացքում:

Մնացած բոլոր պարտավորությունները Խումբը դասակարգում է որպես ոչ ընթացիկ:

Հետաձգված հարկային ակտիվները/պարտավորությունները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ:

Իրական արժեքով գնահատում

Ֆինանսական գործիքների և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի մասին բացահայտումները, որոնք գնահատվում են իրական արժեքով կամ որոնց իրական արժեքը բացահայտվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում, ներկայացված են հետևյալ Ծանոթագրություններում.

- ▶ Հիմնական միջոցներ՝ հաշվառված վերագնահատված արժեքի մոդելով-Ծան. 11
- ▶ Ֆինանսական գործիքներ (ներառյալ ամորտիզացված արժեքով արտացոլվող)-Ծան. 22
- ▶ Իրական արժեքի հիերարխիայի քանակական տեղեկատվության բացահայտում- Ծան. 22

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ, ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական, կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- ▶ այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում,
- ▶ կամ հիմնական շուկայի բացակայության դեպքում տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Խումբը պետք է մուտքի հնարավորություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկա: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեն ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Իրական արժեքով գնահատում (շարունակություն)

Խումբը պետք է օգտագործի գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը:

Բոլոր այն ակտիվները և պարտավորությունները, որոնք համախմբված ֆինանսական հաշվետվություններում գնահատվում են իրական արժեքով կամ որոնց իրական արժեքը բացահայտվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ներքևում թվարկված իրական արժեքի հիերարխիայի հիման վրա՝ հիմնվելով ամենից ցածր մակարդակի ելակետային տվյալի վրա, որն էական է իրական արժեքի չափման համար:

- ▶ 1-ին մակարդակ - նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշվող գներ (չձգրտվող),
- ▶ 2-րդ մակարդակ - գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- ▶ 3-րդ մակարդակ - գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող հիերարխիայի առավելագույն ցածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում, Խումբը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (եղևելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Նշանակալի ակտիվների՝ օրինակ անշարժ գույքի չափման համար ներգրավվում են արտաքին գնահատողներ: Արտաքին գնահատողների ներգրավվումն ամեն տարի որոշվում է Խմբի կողմից: Այս կամ այն գնահատողի ընտրության չափանիշ են հանդիսանում նրա հեղինակությունը, գիտելիքները, շուկայի իմացությունը, անկախությունը և համապատասխանությունը մասնագիտական ստանդարտներին:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնց անհրաժեշտ է վերագնահատել կամ վերաչափել՝ Խմբի հաշվապահական քաղաքականության համաձայն: Այս վերլուծության համար Խումբը ստուգում է հիմնական ելակետային տվյալները՝ կիրառված վերջին գնահատման համար՝ համեմատելով գնահատման համար օգտագործված տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Խմբի գնահատող կոմիտեն և արտաքին անկախ գնահատողները համեմատում են յուրաքանչյուրակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ փոփոխության հիմնավորվածությունը որոշելու նպատակով:

Իրական արժեքով բացահայտումների համար Խումբը դասակարգել է ակտիվները և պարտավորությունները՝ հիմք ընդունելով դրանց բնույթը, առանձնահատկությունները և բնորոշ ռիսկերը, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի մակարդակները, ինչպես բացատրված է վերևում:

Հասույթի ճանաչում

Խմբի հասույթն իր մեջ ներառում է էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության իրացումից մուտքերը՝ զուտ ավելացված արժեքի հարկից:

Հասույթը Խմբի կողմից ճանաչվում է այն ժամանակ, երբ գնորդներին մատուցվել են ծառայություններ, և երբ գործարքի հետ կապված տնտեսական օգուտներն ու կրած ծախսերը կարող են հուսալիորեն գնահատվել, և կա հավանականություն, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկեր

Ընթացիկ շահութահարկ

Ընթացիկ ժամանակաշրջանի շահութահարկի գծով ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները գնահատվում են այն գումարով, որը ենթակա է փոխհատուցման հարկային մարմինների կողմից կամ վճարման հարկային մարմիններին: Տվյալ գումարի հաշվարկման համար կիրառվող հարկային դրույքներն ու օրենսդրությունը, այն օրենքներն ու դրույքներն են, որոնք ընդունվել կամ փաստացի կիրառվել են:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկը հաշվառվում է պարտավորությունների մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազայի և դրանց ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ

- ▶ երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում գույքիլի, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչմանը վերաբերող ժամանակավոր տարբերությունից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկություններում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների դեպքում, որտեղ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամանակահատվածը կարող է վերահսկվել, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են ըստ բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և վնասները հնարավոր կլինի օգտագործել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- ▶ երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով նվազեցվող ժամանակավոր տարբերություններից հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն տեսանելի ապագայում և կլինի հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի, որի դիմաց ամբողջությամբ կամ մասամբ կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրառվեն կամ պարտավորությունները կմարվեն հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենսդրության) վրա:

Շահույթի կամ վնասի կազմում չճանաչված հոդվածների գծով ճանաչված հետաձգված հարկը ևս ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմից դուրս: Հետաձգված հարկային հոդվածները ճանաչվում են դրան վերաբերող գործարքներին զուգահեռ՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ անմիջապես սեփական կապիտալում: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խմբի համար գոյություն ունի օրենքով ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվանցելու, և հետաձգված հարկերը վերաբերում են միևնույն հարկվող սուբյեկտին և հարկային մարմիններին:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկեր (շարունակություն)

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս ձեռքբերված հարկային օգուտները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, կճանաչվեն հետագայում, փաստերի և իրողությունների փոփոխությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության դեպքում:

Հիմնական միջոցներ

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Էլեկտրաէներգիայի արտադրության, ծառայությունների մատուցման, ինչպես նաև վարչական նպատակներով օգտագործվող Խմբի սարքավորումները համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ներկայացված են վերագնահատված արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը ու արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումն իրականացվում է այնպիսի հաճախականությամբ, որ հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում ակտիվների արժեքի ավելացումն անմիջականորեն արտացոլվում է սեփական կապիտալում՝ վերագնահատման պահուստ հոդվածում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հակադարձում է այդ նույն ակտիվի գծով նախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված վերագնահատումից վնասը: Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազում է վերագնահատման արդյունքում, այդ նվազումը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ այդ վերագնահատումը փոխհատուցում է սեփական կապիտալում՝ նախորդող վերագնահատումների արդյունքում ճանաչված աճը:

Վերագնահատված հիմնական միջոցների մաշվածությունը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Հիմնական միջոցի վերագնահատված արժեքի և նույն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածությունների տարբերությունն ամեն տարի վերագնահատման պահուստից տեղափոխվում է չբաշխված շահույթ:

Մաշվածությունը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում գծային մեթոդով: Այսպիսի և բոլոր այլ ակտիվների մաշվածության հաշվեգրումը սկսվում է շահագործման հանձման պահից:

Խումբը բոլոր հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկում է՝ ելնելով այն ենթադրությունից, որ Խմբի գործունեությունը երաշխավորված է մինչև 2019թ.՝ 2004թ. հունվարի 30-ին կնքված միջկառավարական համաձայնագրով:

Գործառնական վարձակալություն

Երբ վարձակալական պայմանագրով վարձատուից Խմբին չեն փոխանցվում վարձակալվող գույքի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, վարձակալական բոլոր վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում:

Վարձակալության ժամկետը չեղյալ չհամարվող այն ժամկետ է, որի ընթացքում վարձակալը վարձակալում է ակտիվը հետագա այլ ժամանակաշրջանների հետ միասին, որոնց ընթացքում վարձակալը հնարավորություն ունի շարունակել ակտիվի վարձակալությունը, եթե վարձակալությունը սկսելու ժամանակ արդեն իսկ պարզ է, որ վարձակալն օգտագործելու է այդ հնարավորությունը:

Խումբը՝ որպես վարձատու

Գույքի այն վարձակալությունը, որի դեպքում Խումբը փաստացի պահպանում է ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն:

Գործառնական վարձակալության պայմանագրի կնքման ընթացքում առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները գումարվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում վարձակալական ժամկետի ընթացքում նույն սկզբունքով, ինչ վարձակալությունից եկամուտը: Վարձակալության պայմանական վճարները ճանաչվում են հասույթի կազմում այն ժամանակաշրջանում, որում դրանք ստացվել են:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ոչ նյութական ակտիվներ

Խմբի կողմից ձեռքբերված որոշակի օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ նվազեցված կուտակված ամորտիզացիա կամ արժեզրկման պահուստ: Ամորտիզացիան ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում, որը համակարգչային ծրագրերի համար կազմում է 10 տարի և այլ ոչ նյութական ակտիվների համար՝ 3 տարի:

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և գնահատում

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ կամ ածանցյալ գործիքներ, ճանաչված որպես հեջավորման գործիքներ արդյունավետ հեջավորման դեպքերում:: Բոլոր ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների, որոնք հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտած գործարքի հետ կապված ծախսերով: Երբ ներդրումները չեն դասակարգվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, հաշվետվությունում ներկայացնելու ժամանակ դրանց իրական արժեքին գումարվում են վերջիններիս հետ անմիջականորեն կապված գործարքի ծախսումները:

Այն ֆինանսական ակտիվների գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվների մատակարարում շուկայում գործող կարգավորմամբ կամ գործարար սովորույթով սահմանված ժամանակահատվածում («ստանդարտ պայմաններով» գործարքներ) ճանաչվում է գործարքի կնքման ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Խումբը պարտավորվում է գնել կամ վաճառել ակտիվը:

Հետագա գնահատման նպատակով ֆինանսական ակտիվները դասակարգվում են չորս դասի՝

- ▶ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ,
- ▶ փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ▶ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- ▶ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Այս դասը Խմբի համար առավել մեծ նշանակություն ունի: Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են ֆիքսված կամ որոշակի վճարումներով, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում: Սկզբնական չափումից հետո այդպիսի ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցնելով արժեզրկման պահուստը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի մաս: Արդյունավետ տոկոսադրույթով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական եկամուտներում: Արժեզրկումից առաջացած վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու անկողմնակալ վկայության գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ակտիվների խումբը համարվում են արժեզրկված այն և միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման անկողմնակալ վկայության, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («կորուստներ վկայող իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որը կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել դեբիտորների կամ դեբիտորների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման ուշացումը կամ չվճարումը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորում: Բացի դրանից նման վկայություն կարող է լինել դիտարկվող տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի ծավալների նվազման վերաբերյալ, օրինակ՝ ժամկետանց պարտավորությունների ծավալների կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որը կարող է հանգեցնել պայմանագրային պարտավորությունների չկատարման:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար Խումբը սկզբնապես գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման անկողմնակալ վկայություն, անկախ այն հանգամանքից, էական է այն, թե ոչ, այդ ակտիվը ներառում է համանման վարկային ռիսկերի բնութագրիչներ ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և գնահատում է դրանց արժեզրկված լինելը խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից կորուստներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով: Արժեզրկված լինելու անկողմնակալ վկայության առկայության դեպքում արժեզրկումից վնասը ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (հաշվի չառնելով դեռևս չկրած ապագա պարտքային կորուստները) ներկա արժեքի տարբերությունն է:

Ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը գեղջվում է ֆինանսական ակտիվների սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե փոխառությունն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկման կորուստ գնահատելու համար որպես գեղջման դրույք օգտագործվում է ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի հաշվի միջոցով, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Տոկոսային եկամուտները շարունակում են հաշվեզրվել նվազեցված հաշվեկշռային արժեքից՝ օգտագործելով արժեզրկման կորուստը հաշվելու նպատակով կիրառվող ապագա դրամական հոսքերի գեղջման տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտները արտացոլվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես ֆինանսական եկամուտ: Փոխառությունները, համապատասխան պահուստների հետ միասին, դուրս են գրվում, եթե ապագայում չկա փոխառությունը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր ապահովության միջոցները օգտագործվել են կամ փոխանցվել Խմբին:

Եթե հաջորդող տարում գնահատված արժեզրկումն ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի հաշիվը ճշգրտելու միջոցով: Եթե հետագա դուրսգրումը ավելի ուշ վերականգնվում է, ապա վերականգնված գումարն արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես ֆինանսական ծախսերի նվազեցում:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչում և գնահատում

Ֆինանսական պարտավորությունները ՀՀՄՍ 39-ի համաձայն, կախված իրավիճակից, դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, վարկեր և փոխառություններ կամ որպես ածանցյալ գործիքներ:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների պարագայում՝ գումարած ուղղակի վերագրելի գործարքի ծախսումները: Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է մարվելու, չեղյալ համարվելու կամ համապատասխան պարտավորության ժամկետը լրանալու դեպքում: Երբ գործող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է նույն փոխառուից՝ էականորեն տարբեր պայմաններով այլ պարտավորությամբ կամ ընթացիկ պարտավորության պայմանները էականորեն փոփոխվում են, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գույք արժեքից նվազագույնով: Պաշարների արժեքը որոշվում է առաջին մուտք առաջին ելք մեթոդի հիման վրա և իր մեջ ներառում է պաշարների ձեռքբերման և գտնվելու վայր և ներկա վիճակին բերելու հետ կապված ծախսումները:

Կանխավճարներ

Կանխավճարները հաշվեկշռում արտացոլվում են փաստացի արժեքով՝ նվազեցված արժեգրկման պահուստով: Կանխավճարը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ այն պարագայում, երբ կանխավճարին վերաբերող ապրանքները կամ ծառայությունները նախատեսվում են ձեռքբերվել մեկ տարի հետո կամ երբ կանխավճարները վերաբերում են ակտիվներին, որոնք դասակարգվում են որպես ոչ ընթացիկ սկզբնական ճանաչման ժամանակ: Ակտիվի ձեռքբերման գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին այն ժամանակ, երբ Խմբին է անցնում ակտիվի տիրապետումը, և հնարավոր է դառնում, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Խումբ: Այլ կանխավճարները դուրս են գրվում շահույթ կամ վնաս, երբ կանխավճարին վերաբերող ապրանքները կամ ծառայությունները ձեռք են բերվում: Եթե կան հայտանիշներ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվելու, կանխավճարի հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում և համապատասխան արժեգրկման կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, ցպահանջ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները բանկերում և այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները մինչև երեք ամիս սկզբնական ժամկետայնությամբ:

Կանոնադրական կապիտալ

Հասարակ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը ուղղակիորեն վերագրվող լրացուցիչ ծախսումներն արտացոլվում են սեփական կապիտալում՝ որպես այդ թողարկման արդյունքում առաջացած նվազեցում՝ գույք հարկերից: Թողարկված բաժնետոմսերի իրական և անվանական արժեքների դրական տարբերությունը հաշվառվում է սեփական կապիտալում որպես էմիսիոն եկամուտ:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)

Վաճառքի գծով ավելացված արժեքի հարկը, որն առաջանում է ապրանքների իրացման ժամանակ, ենթակա է ՀՀ պետական բյուջե փոխանցման ապրանքների մատակարարումից կամ հաճախորդներին և պատվիրատուներին ծառայությունների մատուցումից հետո: Գնումների գծով ԱԱՀ-ն, որպես կանոն, հաշվանցվում է վաճառքի գծով ԱԱՀ-ի նկատմամբ ապրանքների ստացմանը զուգահեռ: Հարկային մարմինները թույլ են տալիս մարել ԱԱՀ-ը գուտ հիմքի վրա: Վաճառքի կամ գնումների գծով ԱԱՀ-ն ճանաչվում է հաշվեկշռում գուտ հիմքով և առանձին տողով բացահայտվում է ակտիվների կամ պարտավորությունների կազմում: Երբ ձևավորվում է դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ, արժեզրկման գծով կորուստը հաշվարկվում է դեբիտորական պարտքի համախառն գումարի համար՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Աշխատողների վարձատրություն

Աշխատավարձերը, տարեկան վճարվող արձակուրդը, անաշխատունակության դիմաց վճարները, պարգևավճարները և այլ ոչ դրամական վարձատրությունները (ինչպես օրինակ, աշխատողների բժշկական ապահովագրությունը) հաշվեկշռվում են այն տարում, որում Խմբի աշխատակիցները համապատասխան ծառայությունները մատուցել են: Աշխատողները ստանում են թոշակներ ՀՀ պետական բյուջեից ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական ակտիվները չեն արտացոլվում համախմբված ֆինանսական հաշվետվություններում, բայց դրանց վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է այն դեպքում, երբ այդպիսի ակտիվների հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում համախմբված ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորությունը մարելու համար տնտեսական ռեսուրսների արտահոսքը հավանական է և այդ արտահոսքը կարող է խելամոռեմ գնահատվել: Պայմանական պարտավորությունները բացահայտվում են այն դեպքում, երբ գոյություն ունի տնտեսական օգուտները մարմնավորող ռեսուրսների արտահոսքի հավանականություն:

Արտարժույթի վերահաշվարկ

Խմբի գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որում Խումբը գործում է: Խմբի գործառնական արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ Հայկական դրամը (ՀՀ դրամ):

Դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործառնական արժույթի փոխանակման փոխարժեքով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված պաշտոնական հաշվարկային դրույթաչափերը: Տարվա վերջի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային դրույթաչափերի միջոցով դրամային ակտիվների և պարտավորությունների գործառնական արժույթի վերահաշվարկից առաջացած օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Տարվա վերջի վերահաշվարկը չի կիրառվում ոչ դրամային հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են պատմական արժեքով:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթային հաշիվների վերահաշվարկման համար օգտագործված փոխարժեքները հետևյալն են. 483.75 ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար (2014թ.՝ 474.97 ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար), 528.69 ՀՀ դրամ/Եվրո (2014թ.՝ 577.47 ՀՀ դրամ/Եվրո), 6.62 ՀՀ դրամ/ռուսական ռուբլի (2014թ.՝ 8.15 ՀՀ դրամ/ռուսական ռուբլի):

2.3 Նոր ստանդարտներ, գործող ստանդարտների պարզաբանումներ և ճշգրտումներ

Խումբն առաջին անգամ է կիրառել որոշ ստանդարտներ և գործող ստանդարտների փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2015թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Յուրաքանչյուր նոր ստանդարտի կամ փոփոխության ազդեցության բնույթը ներկայացված է ստորև.

ՀՀՄՍ 19 «Սահմանված հատուցումների պլաններ. Աշխատակիցների կողմից ներդրումներ» (փոփոխություններ)

ՀՀՄՍ 19-ը կազմակերպություններից պահանջում է գործատուի սահմանված հատուցումների հաշվառումը վարելուց հաշվի առնել աշխատակիցների կամ երրորդ անձանց կողմից կատարած ներդրումները: ՀՀՄՍ 19-ը պահանջում է ծառայության հետ կապված ներդրումները ճանաչել ծառայության ժամանակաշրջանին համապատասխան՝ որպես բացասական հատուցում:

Փոփոխությունները պարզաբանում են, որ եթե ներդրումների գումարը ծառայության մատուցման տարիներից անկախ է, կազմակերպությանը թույլատրվում է այդպիսի ներդրումները ճանաչել որպես ծառայության ինքնարժեքի նվազեցում այն ժամանակաշրջանում, երբ մատուցվել է ծառայությունը՝ ներդրումները ծառայության ժամանակահատվածների վրա բաշխելու փոխարեն: Այս փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Այս փոփոխությունը չի կիրառվում Խմբի գործունեության համար, քանի որ Խումբը չունի սահմանված հատուցումների պլաններ, որոնք նախատեսում են աշխատակիցների կամ երրորդ անձանց կողմից կատարվող ներդրումներ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների բարեփոխումներ՝ 2010 – 2012թթ. շրջան

Բացառությամբ ՖՀՄՍ 2 «Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ» առնչվող փոփոխությունների, որը կիրառվում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների նկատմամբ 2014 թվականի հուլիսի 1-ի կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը կիրառել է հետևյալ փոփոխությունները սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում առաջին անգամ.

ՖՀՄՍ 2 «Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ»

Այս բարեփոխումը կիրառվում է առաջընթաց և պարզաբանում է մի շարք հարցեր՝ կապված արդյունավետության և ծառայության պայմանների, մասնավորապես՝ բաժնետոմս ձեռք բերելու պայմանների հետ: Սույն փոփոխությունը կիրառելի չէ Խմբի համար, քանի որ Խումբը չի իրականացնում բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ:

ՖՀՄՍ 3 «ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց և պարզաբանում է, որ ձեռնարկատիրական գործունեության միավորումների ձևավորման արդյունքում որպես պարտավորություններ կամ ակտիվներ դասակարգված բոլոր պայմանական փոխհատուցումները պետք է հետագայում չափվեն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ անկախ այն հանգամանքից դրանք ՀՀՄՍ 39 շրջանակներում են, թե ոչ: Սույն փոփոխությունը համապատասխանում է Խմբի քաղաքականությանը և, հետևաբար, ազդեցություն չի ունեցել Խմբի վրա:

ՖՀՄՍ 8 «Գործառնական սեզմենտներ»

Փոփոխությունները կիրառվում են հետընթաց և պարզաբանում են, որ.

- ▶ Կազմակերպությունը պետք է բացահայտի ՖՀՄՍ 8 ստանդարտի 12-րդ հոդվածով սահմանվող սեզմենտների միավորման չափանիշների կիրառման հետ կապված ղեկավարության դատողությունները, ներառյալ՝ միավորված գործառնական սեզմենտների կարճ նկարագրերը և տնտեսական բնութագրերը (օրինակ՝ վաճառքը և համախառն շահույթը), որոնք օգտագործվում են սեզմենտները համանմանությունը գնահատելու համար:
- ▶ Սեզմենտի ակտիվների և ընդհանուր ակտիվների համաձայնեցման բացահայտումը, ինչպես նաև սեզմենտի պարտավորությունների մասին ինֆորմացիայի բացահայտումը պահանջվում է միայն այն դեպքում, երբ համաձայնեցումը զեկուցվում է գլխավոր գործառնական որոշումներ կայացնողին:

Սույն փոփոխությունը կիրառելի չէ Խմբի համար, քանի որ Խումբը չունի գործառնական սեզմենտներ:

2.3 Նոր ստանդարտներ, գործող ստանդարտների պարզաբանումներ և ճշգրտումներ (շարունակություն)

ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ»

Փոփոխությունը կիրառվում է հետընթաց և պարզաբանում է, որ ՀՀՄՍ 16-ում և ՀՀՄՍ 38-ում ակտիվը կարող է վերագնահատվել ինչպես համախառն, այնպես էլ զուտ հաշվեկշռային արժեքի վերաբերյալ դիտարկելի տեղեկատվությանը հղում կատարելով: Ի լրումն, կուտակված մաշվածությունը կամ ամորտիզացիան իրենից ներկայացնում է ակտիվի համախառն և հաշվեկշռային արժեքների միջև տարբերությունը: Սույն փոփոխությունը չի ազդել ընթացիկ տարում Խմբի կողմից կատարված ճշգրտումների վրա:

ՀՀՄՍ 24 «Գապակցված կողմերի բացահայտումներ»

Փոփոխությունը կիրառվում է հետընթաց և պարզաբանում է, որ կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպությունը (որը մատուցում է առանցքային կառավարչական անձնակազմի ծառայություններ) հանդիսանում է կապակցված կողմ և, համապատասխանաբար, պետք է բացահայտվի կապակցված կողմերի բացահայտումներում: Բացի այդ, կազմակերպությունը, որն օգտագործում է կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպություն, պետք է բացահայտի կառավարման ծառայությունների գծով ծախսերը: Սույն փոփոխությունը կիրառելի չէ Խմբի համար, քանի որ Խումբը չի օգտվում կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպության ծառայություններից:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների բարեփոխումներ՝ 2011 – 2013թթ. շրջան

Սույն փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը առաջին անգամ է կիրառել սույն փոփոխությունները տվյալ հաշվետվությունների մեջ: Փոփոխությունները ներառում են՝

ՖՀՄՍ 3 «ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց և հստակեցնում է ՖՀՄՍ 3-ի կարգավորման շրջանակի բացառությունները.

- ▶ համատեղ գործունեության համաձայնությունները, այլ ոչ միայն համատեղ ձեռնարկումները, ՖՀՄՍ 3-ի շրջանակից դուրս են: Այս շրջանակի բացառությունը կիրառվում է միայն համատեղ գործունեության համաձայնության ֆինանսական հաշվետվությունների նպատակներով հաշվապահական հաշվառման համար:

Խումբը չի հանդիսանում ձեռնարկատիրական միավորում, հետևաբար, սույն փոփոխությունը կիրառելի չէ Խմբի և նրա դուստր ընկերությունների համար:

ՖՀՄՍ 13 «Դրական արժեքի չափում»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց և պարզաբանում է, որ ՖՀՄՍ 13-ի բացառությունը կարող է կիրառվել ոչ միայն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, այլ նաև այլ պայմանագրերի համար, որոնք գտնվում են ՀՀՄՍ 39-ի շրջանակում: Խումբը չի կիրառում ՖՀՄՍ 13-ի բացառությունը, որը նախատեսում է պորտֆելի մակարդակում իրական արժեքի գնահատման հնարավորությունը:

ՀՀՄՍ 40 «Ներդրումային գույք»

ՀՀՄՍ 40 ստանդարտում օժանդակ ծառայությունների նկարագրությունը տարբերում է ներդրումային գույք և սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք (այսինքն՝ հիմնական միջոց) հասկացությունները: Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց կերպով և պարզաբանում է, որ որոշելու համար թե արդյոք գործարքը ակտիվի գնում է, թե ձեռնարկատիրական գործունեության միավորում, օգտագործվում է ՖՀՄՍ 3-ը, այլ ոչ թե ՀՀՄՍ 40 ստանդարտի օժանդակ ծառայությունների նկարագիրը: Նախորդ ժամանակաշրջաններում Խումբը, որոշելու համար թե արդյոք գործարքը ակտիվի գնում է, թե ձեռնարկատիրական գործունեության միավորում, օգտագործել է ՖՀՄՍ 3-ը, այլ ոչ թե ՀՀՄՍ 40 ստանդարտը: Այսպիսով, սույն փոփոխությունը չի ազդել Խմբի հաշվառման քաղաքականության վրա:

ՖՀՄՍ 13 «Դրական արժեքի չափում»

ՖՀՄՍ 13 փոփոխությունը «Եզրակացության համար հիմքում» պարզաբանում է, որ առանց սահմանված տոկոսադրույքների կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը կարող են հաշվառվել ներկայացված հաշիվ-պայանքագրի գումարով, եթե զեղչման ազդեցությունը էական չէ: Նման մոտեցումը համապատասխանում է Խմբի ընթացիկ քաղաքականությանը, հետևաբար սույն փոփոխությունը ազդեցություն չունի նրա քաղաքականության վրա:

2.4 Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Թողարկված, բայց մինչև Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններին թողարկման ամսաթիվը ուժի մեջ չմտած ստանդարտները ներկայացված են ստորև: Խումբը նախատեսում է կիրառել այդ ստանդարտներն այն ժամանակ, երբ դրանք ուժի մեջ կմտնեն:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014թ. հուլիսին ՀՀՄՄ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջին տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում», ստանդարտին և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը դասակարգման, չափման, արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ է ներկայացնում: ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

Բացառությամբ հեջավորման հաշվառումից, հետընթաց կիրառումը պահանջվում է, բայց համեմատական տեղեկատվությունը պարտադիր չէ: Հեջավորման հաշվառման նկատմամբ հիմնական պահանջները կիրառվում են առաջընթաց որոշ սահմանափակ բացառություններով:

Խումբը պլանավորում է սկսել նոր ստանդարտի կիրառումը պահանջվող ամսաթվի ուժի մեջ մտնելու օրվանից: 2015 թվականին Խումբը իրականացրել է ՖՀՄՍ 9 բոլոր երեք մասերի ազդեցության ընդհանուր գնահատական: Այս նախնական գնահատականը հիմնված է առկա տեղեկատվության վրա և կարող է փոփոխվել՝ ավելի մանրամասն վերլուծության կամ լրացուցիչ հիմնավորված և հաստատող տեղեկատվություն ստանալուց հետո, որը Խմբին հասանելի կլինի ապագայում: Ընդհանուր առմամբ, Խումբը չի ակնկալում նոր պահանջներ զգալի ազդեցություն իր հաշվապահական հաշվեկշռի և սեփական կապիտալի վրա:

Ճշգրտումներ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 «Մաշվածության և ամորտիզացիայի ընդունված մեթոդների պարզաբանում»

Փոփոխությունները հստակեցնում են ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի այն սկզբունքը, որ հասույթը արտացոլում է գործունեության (որի մի մասն է հանդիսանում օգտագործվող ակտիվը) ընթացքում ձևավորված, այլ ոչ թե ակտիվի օգտագործման ընթացքում սպառվող տնտեսական օգուտները: Արդյունքում, առաջացած հասույթի հարաբերությունը ակնկալվող ընդհանուր հասույթին չի կարող օգտագործվել հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի համար և եզակի դեպքերում կարող է օգտագործվել ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի համար: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

Ակնկալվում է, որ այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենա Խմբի վրա, քանի որ Խումբը ոչ նյութական ակտիվների նկատմամբ չի կիրառում հասույթի վրա հիմնված մաշվածության հաշվարկի մոտեցումը:

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Խմբի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների, պարտավորությունների (այդ թվում պայմանական) և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի գումարների վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար վերլուծվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք կարող են տեղի ունենալ որոշակի հանգամանքների պարագայում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատումների վերաբերյալ անորոշությունը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումներ:

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Հիմնական միջոցների վերագնահատում

Խումբը հիմնական միջոցների իրական արժեքի որոշման համար օգտագործել է հաշվապահական դատողություններ և ենթադրություններ: Քանի որ հիմնական միջոցների իրական արժեքի փոփոխություններն ամորտիզացված արժեքի նկատմամբ էական չեն եղել, Խմբի կողմից որոշում է ընդունվել չվերագնահատել հիմնական միջոցները հաշվետու ամսաթվի դրությամբ:

Գնահատման աշխատանքների իրականացման ընթացքում օգտագործվել են միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումներ և մեթոդներ՝

- ▶ ծախսային մոտեցում, որը հիմնվում է այն դատողության վրա, թե որքան միջոցներ են պետք ներդնել գնահատվող գույքի նման գույք ստեղծելու համար,
- ▶ եկամտային մոտեցում, որը հիմնվում է այն ենթադրության վրա, որ այն գինը, որը շուկան պատրաստ է վճարել գնահատվող օբյեկտի համար, որոշվում է ապագայում հաստատուն դրամական միջոցների հոսքեր ապահովելու իր հնարավորությամբ: Այդ մոտեցումը կիրառվել է գնահատվող ակտիվների տնտեսական արժեքը կման առկայության և մեծության որոշման համար (ծախսային մոտեցման շրջանակներում բավարար եկամտաբերության ստուգում):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Խումբը բոլոր հիմնական միջոցների գծով մաշվածությունը հաշվարկում է՝ ելնելով այն ենթադրությունից, որ մինչև 2019թ. Խմբի գործունեությունը երաշխավորված է 2004թ. հունվարի 30-ին կնքված միջկառավարական համաձայնագրով: Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված համանման ակտիվների հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները ներառվում են ակտիվում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային հնացումն ու մաշվածությունը, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազման:

Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Խումբը կանխատեսում է ակտիվից ստանալ օգուտներ: Անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների կանխատեսվող օգտագործումը, բ) շահագործման գործոններից և տեխնիկական սպասարկման ծրագրից կախված՝ մաշվածությունը, և գ) շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային հնացումը:

Ակտիվների արժեքը կումը և պահուստների հաշվառումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ Խումբը գնահատում է Խմբի ակտիվների փոխհատուցվող գումարի՝ հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող արժեքն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսումներով նվազեցված ակտիվի իրական արժեքից առավելագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման նման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ այն ժամանակահատվածում, որում նվազումը տեղի է ունեցել:

Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը գտնում է, որ ակտիվների արժեքը ավելացել է, արժեքը կման պահուստը ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը (շարունակություն)

Արժեզրկման հաշվառումն իր մեջ ներառում է հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, այլ ոչ ընթացիկ ակտիվների և ցածր իրացվելի պաշարների գծով պահուստներ: Պարտավորությունների և ծախսերի գծով պահուստները հիմնականում ներառում են պահուստներ հարկային պարտավորությունների և դատական գործընթացների գծով: Խումբը ճանաչում է արժեզրկման գծով ծախսերը կամ ստեղծում է նման պահուստները այն ժամանակ, երբ իր գնահատումները ցույց են տալիս, որ գոյություն ունի պարտավորության առաջացման հավանականություն, կամ ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ ակտիվի արժեքը չի կարող վերականգնվել, իսկ փոխհատուցման գումարը կարող է խելամտորեն չափվել: Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը հիմնված է յուրաքանչյուր հաճախորդի պարտքի հավաքագրելիության՝ ղեկավարության գնահատման վրա: Եթե տեղի է ունենում որևէ հիմնական հաճախորդի վարկունակության նվազում, կամ եթե դեբիտորների պարտավորությունների չկատարման գծով իրական կորուստները ավելի մեծ են, քան ղեկավարության գնահատումները, իրական մնացորդները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Եթե ղեկավարությունը որոշում է, որ որոշակի դեբիտորական պարտքերի գծով՝ անկախ գումարից, չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, այդ դեբիտորական պարտքը ներառվում է նման վարկային ռիսկի հատկանիշներ ունեցող դեբիտորների խմբում և իրականացվում է տվյալ խմբում ներառված համախառն դեբիտորական պարտքերի արժեզրկման գնահատում:

Պարտքերի արժեզրկման խմբային ստուգման նպատակով դեբիտորական պարտքերը խմբավորվում են՝ ըստ նման վարկային ռիսկի հայտանիշների: Արժեզրկման խմբային գնահատման ենթակա դեբիտորական պարտքերի խմբում ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են պայմանագրային դրամական հոսքերի և համապատասխան ակտիվների ժամկետանց դառնալու գծով Խմբի ղեկավարության՝ անցյալ ժամանակաշրջանում կրած կորուստների դեպքերի և ժամկետանց գումարների վերականգնման փորձի հիման վրա:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության պահանջներին համապատասխանությունը հանդիսանում է ղեկավարության մեկնաբանությունների առարկա, որը կարող է վիճարկվել հարկային մարմինների կողմից: Խմբի ղեկավարությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կատարում է անորոշ հարկային իրավիճակների գնահատում: Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ հարկային մարմինների կողմից չառաջանան լրացուցիչ պահանջներ հարկերի գծով:

Գնահատումները հիմնված են հարկային օրենսդրության վրա, որն ուժի մեջ է մտել կամ փաստացի գործում է հաշվետու ժամանակաշրջանում, ինչպես նաև դատարանի որոշման կամ այդ հարցին վերաբերող այլ նորմատիվ ակտերի հիման վրա: Տուգանքների, տոկոսների և հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանում պարտավորությունը կատարելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատման վրա:

4. Տեղեկատվություն Խմբի մասին

Տեղեկատվություն դուստր ընկերությունների մասին

Խմբի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունը ներառում է հետևյալ դուստր ընկերությունը՝

Ընկերության անվանում	Հիմնական գործունեություն	Իրավաբանական գրանցման երկիր	Մասնակցության բաժնեմաս, %	
			2015 թ.	2014 թ.
«Էներգո Ինվեսթ Հոլդինգ» ՓԲԸ	Էլեկտրաէներգիայի արտադրություն	Հայաստան	100,0	—

2015թ. նոյեմբերին Մայր ընկերությունը ստեղծել է դուստր ընկերություն՝ «Էներգո Ինվեսթ Հոլդինգ» ՓԲԸ, որի կանոնադրական կապիտալը կազմել է 5մլրդ. ՀՀ դրամ: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, 2301, Գործարանային փ. 1: Խմբին պատկանում է դուստր ընկերության բաժնեմասերի 100%:

5. Հասույթ

(հազար ՀՀ դրամ)

	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Էլեկտրաէներգիայի վաճառք	17,154,109	27,950,345
Հգործության վաճառք	4,211,367	3,992,110
Այլ	29,993	27,979
	21,395,469	31,970,434

6. Վաճառքի ինքնարժեք

(հազար ՀՀ դրամ)

	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Գազի գնում	17,722,729	26,212,342
Աշխատավարձ և պարգևավճարներ հիմնական աշխատողների գծով	1,177,550	1,125,225
Էլեկտրաէներգիայի գնում	384,218	511,132
Մաշվածություն և ամորտիզացիա (Ծան. 12)	272,515	350,778
Աշխատավարձ և պարգևավճարներ պայմանագրային աշխատողների գծով	141,396	152,361
Հումք և նյութեր	116,745	131,806
Այլ	156,516	157,777
	19,971,669	28,641,421

7. Վարչական ծախսեր

(հազար ՀՀ դրամ)

	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Աշխատավարձ և պարգևավճարներ հիմնական աշխատողների գծով	637,423	585,657
Աշխատավարձ և պարգևավճարներ պայմանագրային աշխատողների գծով	42,803	66,643
Հարկեր, բացի շահութահարկից	29,849	29,918
Խորհրդատվական ծառայություններ	23,600	32,340
Գործուղման ծախսեր	20,190	19,923
Մաշվածություն և ամորտիզացիա (Ծան. 12)	19,349	20,553
Ապահովագրական և բանկային ծառայությունների վճար	18,969	20,463
Հումք և նյութեր	17,257	22,979
Ներկայացուցչական ծախսեր	13,522	14,401
Հաղորդակցման և գրասենյակային ծախսեր	8,767	12,488
Վերանորոգման և տեխնիկական սպասարկման գծով ծախսեր	6,176	6,248
Այլ ծախսեր	56,706	64,889
	894,611	896,502

8. Այլ եկամուտներ և ծախսեր

(հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Աշխատավարձի գծով հավելյալ վճարների պահուստի վերականգնում (Ծան. 19)	54,235	54,235
Վարձակալությունից եկամուտ	4,717	6,020
Եկամուտ տույժերից և տուգանքներից	–	18,110
Այլ	25,501	2,139
	84,453	80,504
Պարտադիր վճարներ	32,344	28,410
Բարեգործական հատկացումներ	13,458	35,456
Մաշվածություն և ամորտիզացիա (Ծան. 12)	8,589	7,013
Վնասակար արտանետումների համար վճարներ	1,136	3,402
Հարկեր, բացի շահութահարկից	1,260	2,001
Տույժերի և տուգանքների գծով ծախսեր	2	7,368
Այլ	2,121	6,420
	58,910	90,070

9. Ֆինանսական եկամուտներ

(հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ	24,016	170,028
Տոկոսային եկամուտներ	224,755	100,673
	248,771	270,701

10. Շահութահարկ

(հազար ՀՀ դրամ)

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

	2015թ.	2014թ.
Ընթացիկ շահութահարկ՝		
Շահութահարկի գծով ընթացիկ ծախս	97,624	474,495
Հետաձգված հարկ՝		
Տրամադրված փոխառությունների գծով հետաձգված հարկային ակտիվների դուրս գրում	–	49,856
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախս	97,624	524,351

10. Շահութահարկ (շարունակություն)

	2015թ.	2014թ.
Հաշվապահական շահույթը նախքան շահութահարկով հարկումը	799,469	2,689,131
ՀՀ շահութահարկի պարտադիր 20% (2014թ.՝ 20%) դրույքաչափով հաշվարկված շահութահարկ	159,894	537,826
Նախկինում չճանաչված հարկային վնասներից ծախս/(փոխհատուցում)	–	157,751
Հետաձգված հարկային ակտիվի գծով պահուստի փոփոխություն	(67,920)	(190,234)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ	(6,244)	(34,006)
Հարկային բազան չնվազեցնող այլ ծախսեր	11,894	53,014
Շահութահարկի արդյունավետ դրույքաչափով հաշվարկված 12.2% (2014թ.՝ 19.5%) շահութահարկ	97,624	524,351
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախսեր	97,624	524,351

Հետաձգված հարկ

(հազար ՀՀ դրամ)

Հետաձգված հարկը վերաբերում է հետևյալ հոդվածներին.

	2014 թ. հունվարի 1	Շահույթի կամ վնասի կազմում ճանաչված	Անսխալտ սեփական կապիտալում ճանաչված	2014թ.	Շահույթի կամ վնասի կազմում ճանաչված	2015թ.
Հիմնական միջոցներ	1,953,757	(86,784)	–	1,866,973	(83,480)	1,783,493
Առևտրային և այլ դերհիտորական պարտքեր	18,970	(3,810)	–	15,160	(3,468)	11,692
Տրված փոխառություններ	–	1,962	49,856	51,818	14,610	66,428
Ապագա հարկվող շահույթի նկատմամբ հաշվանցվող վնաս	157,751	(157,751)	–	–	–	–
Հավելյալ աշխատավարձի գծով պահուստ	65,081	(10,847)	–	54,234	(10,847)	43,387
Կրեդիտորական պարտք	(14,539)	17,140	–	2,601	15,265	17,866
Հետաձգված հարկային ակտիվ	2,181,020	(240,090)	49,856	1,990,786	(67,920)	1,922,866
Հետաձգված հարկային պարտավորություն	–	–	–	–	–	–
Զուտ հետաձգված հարկ	2,181,020	(240,090)	49,856	1,990,786	(67,920)	1,922,866
Վերականգնում/ (դուրսգրում)	(2,181,020)	190,234	–	(1,990,786)	67,920	(1,922,866)
Հետաձգված հարկ	–	(49,856)	49,856	–	–	–

11. Հիմնական միջոցներ

(հազար ՀՀ դրամ)

	<i>Շենքեր</i>	<i>Շինություններ և փոխանցող հարմարանք-ներ</i>	<i>Մեքենաներ և սարքավորում-ներ</i>	<i>Անավարտ շինարարությ-յուն</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք կամ վերագնահատված արժեք					
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	240,871	155,317	3,593,240	6,904	3,996,332
Ավելացումներ	–	–	63,855	333	64,188
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	240,871	155,317	3,657,095	7,237	4,060,520
Ավելացումներ	–	–	105,778	–	105,778
Դուրսգրում	–	–	(97,679)	–	(97,679)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	240,871	155,317	3,665,194	7,237	4,068,619
Կուտակված մաշվածություն					
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	100,600	109,805	2,114,282	–	2,324,687
Մաշվածության ծախս	23,716	10,248	342,330	–	376,294
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	124,316	120,053	2,456,612	–	2,700,981
Մաշվածության ծախս	23,716	10,249	264,810	–	298,775
Դուրսգրում	–	–	(97,679)	–	(97,679)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	148,032	130,302	2,623,743	–	2,902,077
Զուտ հաշվեկշռային արժեք					
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	140,271	45,512	1,478,958	6,904	1,671,645
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	116,555	35,264	1,200,483	7,237	1,359,539
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	92,839	25,015	1,041,451	7,237	1,166,542

Եթե հիմնական միջոցները չափվեին սկզբնական արժեքի մեթոդով, ապա հաշվեկշռային արժեքները կլինեին հետևյալը.

(հազար ՀՀ դրամ)

	<i>2015թ. դեկտեմբերի 31</i>	<i>2014թ. դեկտեմբերի 31</i>	<i>2014թ. հունվարի 1</i>
Սկզբնական արժեք	19,350,459	19,244,688	19,180,500
Կուտակված մաշվածություն և արժեզրկում	(18,682,649)	(18,383,881)	(18,005,907)
Զուտ հաշվեկշռային արժեք	667,810	860,807	1,174,593

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշվել էին 1,329,934 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ հիմնական միջոցներ (2014թ.՝ 1,196,679 հազար ՀՀ դրամ):

11. Հիմնական միջոցներ (շարունակություն)**Իրական արժեքի համաձայնեցում**

(հազար ՀՀ դրամ)

	<i>Հիմնական միջոցներ</i>
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	1,671,645
Շահույթի կամ վնասի կազմում ճանաչված վերագնահատման գումար	-
Ձեռքբերումներ	64,188
Մաշվածություն	(376,294)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,359,539
Շահույթի կամ վնասի կազմում ճանաչված վերագնահատման գումար	-
Ձեռքբերումներ	105,778
Մաշվածություն	(298,775)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,166,542

12. Մաշվածություն և ամորտիզացիա

(հազար ՀՀ դրամ)

	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Հիմնական միջոցների մաշվածություն		
Վաճառքի ինքնարժեք	272,238	350,303
Վարչական ծախսեր	17,948	18,978
Այլ ծախսեր	8,589	7,013
	298,775	376,294
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա		
Վաճառքի ինքնարժեք	277	475
Վարչական ծախսեր	1,401	1,575
Ընդամենը մաշվածություն և ամորտիզացիա	300,453	378,344

13. Պաշարներ

(հազար ՀՀ դրամ)

	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Խողովակներ	78,995	111,932
Նյութեր	40,056	21,853
Քիմիկատներ	23,679	25,252
Քսանյութեր	9,191	10,931
Վառելիք	5,004	5,535
Տարա	2,749	2,749
Այլ պաշարներ	11,998	11,297
	171,672	189,549

14. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

(հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Ոչ ընթացիկ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	163,390	146,048
Ընդամենը ֆինանսական ակտիվներ ոչ ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	163,390	146,048
Ընթացիկ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,091,256	4,826,467
Այլ դեբիտորական պարտքեր	31,098	32,376
Ընդամենը ֆինանսական ակտիվներ ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	3,122,354	4,858,843
Փոխհատուցման ենթակա ԱԱՀ	448,395	744,648
Կանխավճարներ	8,936	12,291
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,579,685	5,615,782

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը սովորաբար արտահայտված են ՀՀ դրամով:

Առևտրային դեբիտորական պարտքերը տոկոսային չեն և հիմնականում ունեն 30-ից 60 օր ժամկետայնություն:

Խմբի դեբիտորական պարտքերը չեն հանդիսանում ժամկետանց կամ արժեզրկված:

15. Տրված փոխառություններ

2014թ. ընթացքում Խումբը կնքել է կապակցված կողմ հանդիսացող ընկերությանը փոխառության տրամադրման պայմանագիր 15,000,000 եվրոն չգերազանցող սահմանաչափով, տարեկան 9.95% տոկոսադրույքով և մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը մարման ժամկետով: Փոխառությունը կարող է տրամադրվել Եվրոյով կամ ԱՄՆ դոլարով: 2014թ. սեպտեմբերի 9-ին Խումբը տրամադրել է առաջին տրանշը 3,000,000 ԱՄՆ դոլարի չափով: Տրամադրած փոխառության հաշվեկշռային արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,308,216 հազար ՀՀ դրամ (2014թ.՝ 1,168,233 հազար ՀՀ դրամ):

2015թ. դեկտեմբերին Խումբը տրամադրել է կարճաժամկետ վարկ երրորդ կողմին՝ 10 մլն. ԱՄՆ դոլարի չափով, մինչև 2016թ. փետրվարի 19-ը մարման ժամկետով, տարեկան 4.90% տոկոսադրույքով: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկի հաշվեկշռային արժեքը կազմել է 4,857,632 հազար ՀՀ դրամ:

16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

(հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Ցպահանջ բանկային հաշիվներ	699,459	5,353,834
Կանխիկ միջոցներ	248	410
	699,707	5,354,244

Դրամական միջոցները և դրանց համարժեքները 2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են՝

	2015թ.	2014թ.
Ընթացիկ հաշիվներ բանկում և դրամարկղում ՀՀ դրամով	699,538	5,354,074
Ընթացիկ հաշիվներ բանկում ԱՄՆ դոլարով	158	154
Ընթացիկ հաշիվներ բանկում ռուսական ռուբլիով	11	16
	699,707	5,354,244

17. Կանոնադրական կապիտալ և պահուստներ

(հազար ՀՀ դրամ)

Հայտարարված կանոնադրական կապիտալ

	2015թ.	2014թ.
4,891.2 դրամ անվանական արժեքով 1,597,430 սովորական բաժնետոմսեր	7,813,350	7,813,350

2014 թ. ընթացքում Խումբը փոխհատուցեց կուտակված վնասը կանոնադրական կապիտալի միջոցով՝ 8,160,950 ՀՀ դրամի չափով:

Պարտադիր պահուստ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն Խումբը պարտավոր է տվյալ տարվա շահույթի 5%-ը փոխանցել պարտադիր պահուստ, մինչև այդ պահուստի գումարը չհասնի Խմբի ընդհանուր կանոնադրական կապիտալի 15%-ին: 2014թ. Խումբը համալրել է պարտադիր պահուստը 35,092 հազ. դրամի չափով (2014թ.՝ 108,239 հազ. դրամ):

Սկստիվների վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը արտացոլում է հիմնական միջոցների իրական արժեքի աճը, ինչպես նաև նվազումը այնքանով, որքանով այդ նվազումը փոխհատուցում է այդ նույն ակտիվի՝ նախորդ ժամանակաշրջանում սեփական կապիտալի կազմում ճանաչված իրական արժեքի աճը: Տվյալ պահուստը կարող է օգտագործվել շահաբաժինների վճարման նպատակով միայն խիստ սահմանափակ դեպքերում: Հիմնական միջոցների վերագնահատման պահուստը 2015 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 79,744 հազ. ՀՀ դրամ (2014թ՝ 103,008):

18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

(հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Ընթացիկ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,688,822	4,456,967
Այլ կրեդիտորական պարտքեր	350	120
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	2,689,172	4,457,087
Հիմնական աշխատակիցների պարգևատրման գծով հաշվեգրված ծախսեր	86,968	64,535
Պայմանագրային աշխատակիցների պարգևատրման գծով հաշվեգրված ծախսեր	9,079	13,807
Վճարման ենթակա այլ հարկեր	81,775	151,268
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,866,994	4,686,697

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը հիմնականում արտահայտված են ՀՀ դրամով և մարվում են 60 օրվա ընթացքում:

19. Աշխատավարձի գծով հավելյալ վճարների պահուստ

(հազար ՀՀ դրամ)

	Պահուստ
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	325,407
Դուրսգրված	(54,235)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	271,172
Դուրսգրված	(54,235)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	216,937

20. Կապակցված կողմերի բացահայտումներ

Կողմերը հիմնականում համարվում են կապակցված այն դեպքում, երբ դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո կամ եթե մի կողմը հնարավորություն ունի մյուս կողմին վերահսկել կամ կարող է կիրառել էական ազդեցություն կամ միացյալ վերահսկողություն այլ կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման նկատմամբ: Կողմերի կապակցված լինելը որոշելիս հաշվի է առնվում կողմերի ոչ միայն իրավական ձևը, այլև փոխհարաբերությունների բնույթը:

Խմբի մայր ընկերության և փաստացի սեփականատերերի մասին տեղեկատվությունը բացահայտված է Օանոթագրություն 1-ում:

Խումբը գնում է գազ մի կապակցված կողմից և վաճառում էլեկտրաէներգիա մյուս կապակցված կողմին առքուվաճառքի պայմանագրերի հիման վրա, որոնք վերանայվում են ամեն տարի: Էլեկտրաէներգիայի և գազի սակագները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

2015 և 2014 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված կողմերի հետ հաշվարկների գծով գործարքների արժեքները և չմարված մնացորդները ներառել են հետևյալ դիրքերը.

(ա) Եկամուտներ

(հազար ՀՀ դրամ)

	<i>Գործարքի արժեք 2015թ.</i>	<i>Դեբիտո- րական պարտք 2015թ.</i>	<i>Տրված փոխառու- թյուններ 2015թ.</i>	<i>Գործարքի արժեք 2014թ.</i>	<i>Դեբիտո- րական պարտք 2014թ.</i>	<i>Տրված փոխառու- թյուններ 2014թ.</i>
Էլեկտրաէներգիայի և դրա հետ կապված արտադրանքների բաշխում՝						
Համատեղ վերահսկողություն տակ գտնվող ընկերություններ	21,395,469	3,091,196	–	31,970, 916	4,826,311	–
Փոխառությունների սրամադրում և մարում՝						
Համատեղ վերահսկողություն տակ գտնվող ընկերություններ	–	–	6,165,848	1,229,070	–	1,168,233
Տոկոսային եկամուտներ						
Համատեղ վերահսկողություն տակ գտնվող ընկերություններ	–	–	116,960	–	–	30,300
Այլ եկամուտներ՝						
Համատեղ վերահսկողություն տակ գտնվող ընկերություններ	2,758	220	–	21,162	687	–
	21,398,227	3,091,416	6,282,808	33,221,148	4,826,998	1,198,533

20. Կապակցված կողմերի բացահայտումներ (շարունակություն)**(բ) Ծախսեր**

(հազար ՀՀ դրամ)

	Գործարքի արժեք 2015թ.	Կրեդիտորական պարտք 2015թ.	Գործարքի արժեք 2014թ.	Կրեդիտորական պարտք 2014թ.
Էլեկտրաէներգիայի և բնական գազի ձեռքբերում				
Համատեղ վերահսկողություն տակ գտնվող ընկերություններ	18,128,099	2,663,393	26,742,652	4,441,860
Այլ ծախսեր՝				
Համատեղ վերահսկողություն տակ գտնվող ընկերություններ	10,898	1,810	19,387	1,919
	18,138,997	2,665,203	26,762,039	4,443,779

Խմբի առանցքային կառավարչական անձնակազմին հատուցում

(հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Կարճաժամկետ հատուցումներ	388,209	320,079
Այլ հատկացումներ	–	29,025

21. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ**Գործարար միջավայր**

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու կարգավորման հայեցակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը հիմնականում կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Խմբի կայունությունն ապահովելու նպատակով:

Իրավական միջավայր

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբը կարող է լինել դատական հայցերի և պահանջների առարկա: Ղեկավարության համոզմամբ, հավանական պարտավորությունները (որանց առկայության դեպքում), որոնք ծագում են նման հայցերի և պահանջների արդյունքում, էական բացասական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության արդյունքների վրա:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունները հանդիսանում են տարընթերցումների և հաճախակի իրականացվող բարեփոխումների առարկա: Խմբի գործունեության ընթացքում կիրառված այդ օրենսդրությունների գծով ղեկավարության մեկնաբանությունները կարող են վիճարկվել համապատասխան պետական մարմինների կողմից: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատականների գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն գործարքների և գործունեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնք նախկինում հարկային մարմինները չէին վիճարկել: Որպես այդպիսին, էական լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ կարող են հաշվարկվել: Ստուգմանը նախորդող երեք օրացուցային տարիների ընթացքում հարկային հաշվառումը կարող է ենթարկվել ստուգման: Որոշ դեպքերում ստուգումները կարող են իրականացվել ավելի երկար ժամանակահատվածի համար:

2013թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Հայաստանի նոր հարկային օրենսդրությունը եկամտային հարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասով, համաձայն որի վերացվել են սոցիալական վճարները, իսկ եկամտային հարկի հաշվարկի սանդղակը փոխվել է:

21. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ (շարունակություն)**Հարկային միջավայր (շարունակություն)**

Ղեկավարությունը գտնում է, որ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը պատշաճ կերպով է կատարում համապատասխան օրենքները և Խմբի՝ հարկային, արժութային և մաքսային հարցերի գծով դիրքորոշումը պետական մարմինների կողմից կընդունվի:

Շրջակա միջավայր պահպանության հետ կապված խնդիրներ

Ղեկավարության կարծիքով Խումբը կատարել է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող Կառավարության բոլոր պահանջները, այդ իսկ պատճառով ղեկավարությունը գտնում է, որ Խումբը ներկայումս չունի շրջակա միջավայրի պահպանության գծով ոչ մի էական պարտավորություն: Այնուամենայնիվ շրջակա միջավայրի պահպանության գծով օրենսդրությունը ՀՀ-ում հարաբերականորեն նոր է, և օրենսդրության և դրա մեկնաբանությունների հավանական փոփոխությունները կարող են հանգեցնել ապագայում պարտավորությունների էական աճի:

22. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները

Խմբի հիմնական ֆինանսական պարտավորությունները իրենց մեջ ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Այդ ֆինանսական պարտավորությունների հիմնական խնդիրն է Խմբի տնտեսական գործունեության ֆինանսավորումը: Խումբը ենթակա է շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերին:

Խմբի ղեկավարությունն իրականացնում է վերահսկողություն նշված ռիսկերի կառավարման ուղղությամբ: Այդ ռիսկերի կառավարման ուղղությամբ քաղաքականությունները ամփոփված են ստորև.

Շուկայական ռիսկ

Խումբը ենթակա է շուկայական ռիսկին: Շուկայական ռիսկը հիմնականում վերաբերում է Խմբի համար սահմանված սակագներին, և ազդում է գնվող էլեկտրաէներգիայի գնի և սպառվող էլեկտրաէներգիայի՝ բաժանորդների համար սահմանված սակագների վրա: Թեև Խումբը ազդեցություն ունի որոշ սակագների մեծության սահմանման վրա, սակագների մակարդակները նրա վերահսկողությունից դուրս են, և քաղաքական գործոնները ևս այդ սակագների վերջնականացման գործում որոշ դերակատարություն ունեն:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն արտարժույթի փոխարժեքների տատանման հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է: Խումբը ենթակա է արտարժույթի փոխարժեքի տատանման ռիսկին, որը հիմնականում կապված է Խմբի դրամական միջոցների հետ:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների նկատմամբ զգայունություն

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս արտարժույթի փոխարժեքների հնարավոր փոփոխության նկատմամբ, այլ հավասար պայմաններում, Խմբի նախքան հարկումը շահույթի զգայունությունը (դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների փոփոխության պատճառով)

(հազար ՀՀ դրամ)

	<i>Փոխարժեքի փոփոխություն աճ/նվազում (%)</i>	<i>Հարկումից առաջ շահույթի վրա ազդեցություն</i>
2015թ.		
ԱՄՆ դոլար	10.0	130,837
ԱՄՆ դոլար	(10.0)	(130,837)
2014թ.		
ԱՄՆ դոլար	19.10	223,162
ԱՄՆ դոլար	(19.10)	(223,162)

22. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն իրենից ներկայացնում է գործընկերոջ կողմից՝ ֆինանսական գործիքի կամ հաճախորդի հետ կնքած պայմանագրի գծով պարտականությունները չկատարելու հետևանքով ֆինանսական վնասներ կրելու ռիսկը: Խումբը ենթարկվում է վարկային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքերի) և ֆինանսական գործունեության հետ, ներառյալ բանկերում և ֆինանսական կազմակերպություններում ավանդները, արտարժույթի և այլ ֆինանսական գործիքների գծով գործարքները:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Խումբն ունի մեկ դեբիտոր, որի գծով պարտավորության գումարը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է առևտրային դեբիտորական պարտքերի գումարի 100%-ը (2014թ.՝ 100%):

Հաշվարկները կատարվում են փաստացի պատմական տվյալների հիման վրա: Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ առավելագույն վարկային ռիսկը ներկայացվում է ֆինանսական ակտիվների յուրաքանչյուր դասի հաշվեկշռային արժեքով:

Ֆինանսական գործիքներ և դրամական ավանդներ

Ազատ դրամական միջոցները ներդրվում են այնպիսի ֆինանսական կազմակերպություններում, որոնք ներդրման ամսաթվի դրությամբ ունեն սնանկացման նվազագույն ռիսկ:

Իրացվելիության ռիսկ

Խումբն իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով իրացվելիության ընթացիկ պլանավորման գործիքը:

Ելնելով պայմանագրային պայմաններին համապատասխան չգեղջված վճարումներից՝ կրեդիտորական և այլ պարտքերի մարման ժամկետը 2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ ամսից պակաս է:

Սեփական կապիտալի կառավարում

Խումբն իրականացնում է սեփական կապիտալի վերահսկողություն ֆինանսական լծակի գործակցի միջոցով, որը հաշվարկվում է որպես գուտ փոխառությունների հարաբերակցություն ընդհանուր կապիտալի ու գուտ փոխառությունների հանրագումարին:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Ըստ Խմբի գնահատականի դրամական միջոցների, առևտրային դեբիտորական պարտքերի, ինչպես նաև այլ ընթացիկ պարտավորությունների իրական արժեքը մոտ է իրենց հաշվեկշռային արժեքին՝ հիմնականում պայմանավորված նրանով, որ այդ գործիքները պետք է մարվեն մոտ ապագայում:

Տրամադրած երկարաժամկետ փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Խմբի ֆինանսական գործիքների արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

Իրական արժեքի գնահատման աղբյուրների հիերարխիա

Ֆինանսական գործիքների իրական արժեքը ներառում է այն գինը, որը կստացվեր կամ կվճարվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ պարտավորության փոխանցումից:

22. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)**Իրական արժեքի գնահատման աղբյուրների հիերարխիա (շարունակություն)**

Իրական արժեքի որոշման համար օգտագործվել են հետևյալ մեթոդները և ենթադրությունները՝

- ▶ Խմբի տոկոսային փոխառությունների իրական արժեքը որոշվում է՝ օգտագործելով դրամական հոսքերի դիսկոնտավորման մոդելը, որը օգտագործում է դիսկոնտավորման տոկոսադրույքներ, որոնք արտահայտում են թողարկողի փոխառության տոկոսադրույքները հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս և նրանց մասին տեղեկատվության բացահայտման համար Խումբը օգտագործում է հետևյալ հիերարխիան՝

- ▶ Մակարդակ 1: համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաների գնանշվող (չճշգրտված) գներ,
- ▶ Մակարդակ 2: չափման այլ մեթոդներ, որոնց համար բոլոր ելակետային տվյալները, որոնք ունենում են էական ազդեցություն արտացոլված իրական արժեքի վրա, դիտարկելի շուկայում ուղղակիորեն կամ անուղղակիորեն,
- ▶ Մակարդակ 3: մեթոդներ, որոնցում օգտագործվում են ելակետային տվյալներ, որոնք ունենում են էական ազդեցություն արտացոլված իրական արժեքի վրա, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տեղեկատվության վրա:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրական արժեքի գնահատման մակարդակների միջև շարժ տեղի չի ունեցել:

Իրական արժեքի բացահայտման նպատակով՝ Խումբը սահմանել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով նրանց բնույթի, բնութագրերի և ռիսկերի վրա, ինչպես նաև սահմանել է իրական արժեքի հիերարխիայի մակարդակը:

	<i>Իրական արժեքի գնահատում</i>			<i>Ընդամենը իրական արժեք</i>
	<i>Ակտիվ շուկաների գնանշվող գներ (Մակարդակ 1)</i>	<i>Նշանակալի դիտարկելի եկակետային տվյալներ (Մակարդակ 2)</i>	<i>Նշանակալի ոչ դիտարկելի եկակետային տվյալներ (Մակարդակ 3)</i>	
2015 թ.				
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Հիմնական միջոցներ (Օան. 11)	–	–	1,166,542	1,166,542
Ընդամենը	–	–	1,166,542	1,166,542
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	699,707	–	–	699,707
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	–	–	3,579,685	3,579,685
Տրված փոխառություններ	–	–	6,165,848	6,165,848
Ընդամենը	699,707	–	9,745,533	10,445,240
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	–	–	2,866,994	2,866,994
Ընդամենը	–	–	2,866,994	2,866,994

**22. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները
(շարունակություն)****Իրական արժեքի գնահատման աղբյուրների հիերարխիա (շարունակություն)**

	<i>Իրական արժեքի գնահատում</i>			<i>Ընդամենը իրական արժեք</i>
	<i>Ակտիվ շուկաների գնանշվող գներ (Մակարդակ 1)</i>	<i>Նշանակալի դիտարկելի եղակետային տվյալներ (Մակարդակ 2)</i>	<i>Նշանակալի ոչ դիտարկելի եղակետային տվյալներ (Մակարդակ 3)</i>	
2014 թ.				
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Հիմնական միջոցներ (Շան. 11)	–	–	1,359,539	1,359,539
Ընդամենը	–	–	1,359,539	1,359,539
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,354,244	–	–	5,354,244
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	–	–	5,615,782	5,615,782
Տրված փոխառություններ	–	–	1,168,233	1,168,233
Ընդամենը	5,354,244	–	6,784,015	12,138,259
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	–	–	4,686,697	4,686,697
Ընդամենը	–	–	4,686,697	4,686,697

Հիմնական միջոցները վերաբերում են իրական արժեքի գնահատման հիերարխիայի 3-րդ Մակարդակին:

Հիմնական միջոցների գնահատման համար օգտագործվող գնահատման մոդելների և հիմնական եղակետային տվյալների նկարագրություն

	<i>Գնահատ- ման մոդել</i>	<i>Նշանակալի ոչ դիտարկելի եղակետային տվյալներ</i>	<i>Միջակայք (միջին կշռված նշանակություն)</i>	
			<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Հիմնական միջոցներ	Մեթոդ ԴՀԴ (տես ստորև)	Դիսկոնտավորման տոկոսադրույք	22,08%	23,54%

Դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի համաձայն իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով սեփականության իրավունքի հետ կապված օգուտների և պարտավորությունների վերաբերյալ ենթադրությունները, ակտիվի օգտագործման ժամանակաշրջանում՝ ներառյալ ելքի կամ վերջնական արժեքը: Այս մեթոդը իր մեջ ներառում է դրամական հոսքերի կանխատեսում: Կանխատեսվող դրամական հոսքերի համար կիրառվում է շուկայական տվյալների հիման վրա որոշված դիսկոնտավորման տոկոսադրույք, ինչի արդյունքում որոշվում է ակտիվի հետ կապված եկամուտների հոսքի ներկա արժեքը: Դրամական հոսքերի պատշաճ շարունակական հոսքը երաշխավորվում է մինչև 2019թ.՝ 2004 թ. հունվարի 30-ի միջկառավարական համաձայնագրով: Մպասվող կանոնավոր գուտ գործառնական եկամուտները դիսկոնտավորվում են:

Դիսկոնտավորման տոկոսադրույքի նշանակալի աճը (նվազումը), առանց հաշվի առնելու այլ գործոնների հետ կապը, կարող է հանգեցնել հիմնական միջոցների իրական արժեքների նշանակալի նվազմանը (աճին):